ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՈՎ

Ն. Ա. ԹԱՎԱՔԱԼՅԱՆ

Ազգային հարցի լենինյան կոնցեպցիան նախկին ԽՍՀՄ-ում համընդհանուր, ընդունված անառարկելի ճշմարտություն էր համարվում, ազգային հարցի ճիշտ և արդարացի լուծման միակ հավաստի ուղենիշը։ Այդ կոնցեպցիայի սկզբունքների բազայի վրա էր ստեղծվել նաև խորհրդային ազգերի, ժողովուրդների պետական-քաղաքական կառուցվածքը, այն համընդհանուր մոնումենտալ շենքը, որը կոչվում էր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՍՀՄ) և որը թվում էր հավերժական, ինչպիսին թվում էր նաև այն ծնող ու սնող ուսմունքը՝ լենինիզմը։

Սակայն կյանքն ապացուցեց հակառակը։ Յոթանասուն տարի գոյատևելով, Խորհրդային Միությունը աներևակայելի արագությամբ փլուզվեց։ Դա վառ ապացույցն էր նախ և առաջ այն բանի, որ խարխուլ էին այն հիմքերը, որոնց վրա խարսխված էր այսպես կոչված եղբայրական ժողովուրդների անխախտ բարեկամության խորհրդանիշը՝ Խորհրդային պետությունը, որի հիմնադիրը Լենինն էր և որը սնվում ու գոյատևում էր նրա գաղափարների հյութով, ազգային հարցի լուծման նրա կոնցեպցիայի ոգով։ Նշանակում է, ԽՍՀՄ-ի փլուզումը ահեղ դատաստանն էր նաև այդ գաղափարների ու կոնցեպցիայի, ապացույցը նրանց արատավոր ու հակագիտական դոգմաների։

Ջարդարացավ ազգային հարցի լուծման այն ելակետային տեսական դրույթը, ինչը համարվում էր լենինյան ուսմունքի առաջնակարգ կարևորագույն գիտական հայտնությունը։ Դա, առանձին վերցրած, մի երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունն էր, այն էլ մի այնպիսի հետամնաց երկրում, ինչպիսին Ռուսաստանն էր։ Լենինի գնահատմամբ՝ «Ամբողջ արևելյան Եվրոպայում այժմ միայն Ռուսաստանն է մնում առավել հետամնաց պետությունը»[1], որտեղ նրա վկայակոչած 1913 թ. տվյալներով «անգրագետները կազմում են 73 %, չհաշված մինչև 9-ամյա երեխաները»[2]։ Նույն 1913 թ. Լենինը գրում էր. «Ներկայումս Ռուսաստանն իրենից ներկայացնում է առավել հետամնաց և ռեակցիոն պետական կարգ ունեցող մի երկիր շրջապատի բոլոր երկրների համեմատությամբ, սկսած, Արևմուտքում՝ Ավստրիայից... և վերջացրած, Արևելքում՝ Հանրապետական Չինաստանով»[3]։ Լենինը Ռուսաստանը համարում էր «սոսկալի հետամնաց»[4], «կիսավայրենի»[5] երկիր։

Ազգերի բախտորոշման ճակատագիրը Լենինը կապում էր Ռուսաստանում սոցիալիզմի հաղթանակի փաստի հետ, միայն դրանով էր պայմանավորվում ազգային հարցի արդարացի, միակ ճիշտ լուծումը, ինչը, սակայն, այդպես էլ չկատարվեց։

Իհարկե, անարդարացի կլինի ասել, թե ազգային հարցի լենինյան կոնցեպցիան սխալ է ամբողջովին և որ նրանում չկան ճշմարիտ, ընդունելի տեսական դրույթներ ու թեզեր։ Կան և ոչ քիչ։ Բայց պարադոքսն այն է, որ քիչ

---

1 Վ. Ի. Լենին, երկ, հ. 22, էջ 189։
2 Նույն տեղում, էջ 422։
3 Նույն տեղում, հ. 23, էջ 385։
4 Նույն տեղում, էջ 519։
5 Նույն տեղում, հ. 24, էջ 164։

չեն նաև դրանց ուղղակի հակադիր, նույն հարցին վերաբերող սխալ, հակասական և իրարամերժ դրվածքները, որոնցով փաստորեն ժխտվում, ի չիք է դառնում ասված ճշմարիտը։ Իսկ դա համապատասխանաբար սխալ կողմնորոշիչ դեր է կատարել ազգային հարցի պրակտիկ լուծման գործում, հանգեցրել բազմաթիվ կոպիտ, աղաղակող սխալների ու խեղաթյուրումների, դաժան կամայականությունների ու բռնությունների, ընդհուպ մինչև բոլոր ժողովուրդների կամ նրանց զգալի բեկորների ռեպրեսիաների ու բռնագաղթերի, փաստորեն՝ գենոցիդի։ Այդ ամենի արդյունքն են արդի ազգամիջյան կոնֆլիկտները։

Դիտարկենք հիմնահարցի կարևոր ասպեկտներից միայն երկուսը՝ ինչպես է Լենինը գնահատել ազգային հարցը, նրա տեղն ու դերը, նշանակությունը հասարակական կյանքում և ապա՝ ինչպես է ընկալել այդ հարցի լուծումը, դրա անհրաժեշտ նախադրյալներն ու ուղիները։

Լենինը առաջնակարգ տեղն ու դերը հասարակական կյանքում հատկացնում էր պրոլետարական դիկտատուրային, նրան ստորադասում ազգային հարցը։ Վերջինիս գնահատականն ու նշանակությունը հասարակական կյանքում որոշվում, չափվում-ձևվում էր պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, նրա շահերի ու խնդիրների իրականացման տեսանկյունից։ Ազգային հարցը դիտվում էր որպես ածանցական, ենթակա այդ դիկտատուրային։ Սրանում Լենինը, որպես օրթոդոքս մարքսիստ, ելնում էր նրանից, որ, իր իսկ խոսքերով ասած, «Մարքսը և Էնգելսը ազգային հարցին ընդհանրապես խիստ քննադատորեն էին վերաբերվում՝ գնահատելով նրա պայմանական-պատմական նշանակությունը»[6], կամ՝ «բանվորական հարցի» համեմատությամբ ազգային հարցի ստորադաս նշանակությունը Մարքսի համար կասկածից վեր է»[7]։ Ինքն էլ իր հերթին ազգային հարցը գնահատում էր «որպես համեմատաբար պակաս կարևոր»[8] հարց, վերապահելով նրան երկրորդական տեղ։ Լենինը քննադատում էր լիբերալներին, որոնց, իր խոսքերով ասած, «դուր չի գալիս, որ հիմնական հարցը համարում են (սոցիալիստներն ու դեմոկրատները—Ն. Թ.) պրոլետարիատի պայքարը բուրժուազիայի դեմ։ Լիբերալները ջանում են հրահրել և բորբոքել ազգային պայքարը, որպեսզի շեղեն ուշադրությունը դեմոկրատիայի և սոցիալիզմի լուրջ հարցերից»[9]։

Ի հակակշիռ լիբերալների, Լենինը գրում էր. «Իրականում, եվրոպական կյանքի հարցերի» մեջ սոցիալիզմը գրավում է 1-ին տեղը, իսկ ազգային պայքարը՝ 9-րդ տեղը... նույնիսկ ծիծաղելի է,—հեգնում էր նա,—սոցիալիզմի համար պրոլետարիատի պայքարը, այդ համաշխարհային երևույթը, համեմատել արևելյան Եվրոպայի մի հարստահարված ազգի պայքարի հետ՝ ընդդեմ իրեն հարստահարող ռեակցիոն բուրժուազիայի»[10]։ Սա ազգային հարցի հանիրավի թերագնահատում էր։ Ճիշտ է, Լենինը երբեմն նշում էր նաև ազգային հարցի կարևորությունն ու նույնիսկ «հսկայական նշանակությունը»[11]։ Սակայն իրականում, ըստ էության, ազգային հարցին երբեք պատշաճ ուշադրություն չդարձվեց և այն ընդմիշտ մնաց Լենինի կողմից ի սկզբանե վերապահված հետին տեղում՝ նույնիսկ ագրարային հարցի համեմատ։ Վերջինով էր Լենինը պայմանավորում Ռուսաստանի դեմոկրատացումը. «Ռուսաստանի դեմոկրատացումը,—ասում էր նա,—կախված է ոչ թե ազգային, այլ ագրարային հարցից»[12]։

---

6 Նույն տեղում, հ. 25, էջ 362։

7 Նույն տեղում, էջ 363։

8 Նույն տեղում, հ. 40. էջ 24։

9 Նույն տեղում, հ. 23, էջ 132։

10 Նույն տեղում, հ. 23, էջ 132։

11 Նույն տեղում, հ. 25, էջ 363, հ. 26, էջ 125, հ. 34, էջ 351։

12 Նույն տեղում, հ. 23, էջ 67։

Բնակչության կազմով այնպիսի մի բազմազգ, խայտարղետ, ազգամիջյան հակասություններով ու նրանցով պայմանավորված կոնֆլիկտների պոտենցիալ վտանգներով հղի երկրում, ինչպիսին Ռուսաստանն էր, որտեղ ոչ ռուս ժողովուրդները, հենց իր՝ Լենինի տվյալներով, կազմում էին բնակչության մեծամասնությունը՝ 57 տոկոսը[13],—երկրի դեմոկրատացումը չկապել (և, գուցե, նույնիսկ առաջին հերթին) ազգային հարցի հետ, չընդունել վերջինիս դերն ու նշանակությունը երկրի դեմոկրատացման հարցի լուծման մեջ՝ առնվազն կարճատեսություն էր քաղաքականության բնագավառում և ազգային հարցի պարզորոշ թերագնահատում։ Կարծում ենք, հենց ազգային հարցի դերի ու նշանակության նման թերագնահատումն էր պատճառներից մեկը, որ նախկին ԽՍՀՄ-ում ստեղծվեցին ոչ թե դեմոկրատական-ժողովրդավարական, այլ զուտ տոտալիտար-համայնատիրական կարգեր՝ «սոցիալիզմ» կոչեցյալի բողով, իսկ դեմոկրատիզմի բացակայության պայմաններում, ըստ Լենինի, ազգային հարցի լուծումը բացառվում է, և իրոք, այդպես էլ եղավ նախկին ԽՍՀՄ-ում։ Սակայն Լենինը, ազգային հարցի լուծումը կապելով երկրի դեմոկրատացման հետ, այդ ճշմարտությունն ընդունում էր, նկատի ունենալով սոսկ կապիտալիստական հասարակարգը։ Ինչ վերաբերում է սոցիալիստական հասարակարգին, ապա, նրա համոզմամբ, այն անվերապահորեն դեմոկրատական է և դրա վառ օրինակը։ Հետևաբար, սոցիալիստական հասարակարգում, ըստ Լենինի, «ազատությունը և հավասարությունը խաբեություն չեն լինի», որովհետև, «աշխատավորների տիրապետությունը կոչնչացնի որևէ ազգության... ամենն մի ճնշում»[14]։ «Աշխատավորների տիրապետություն» ասելով Լենինը նկատի ուներ պրոլետարիատի դիկտատուրան, որը նա իսկական դեմոկրատիա էր համարում և որին էլ բոլոր դեպքերում ու պայմաններում ենթարկում էր ազգային հարցը։

Լենինը համոզված էր, որ սոցիալիստական հեղափոխության շահերին պիտի ենթարկել բոլոր ազգային շարժումները։ Նա կոչ էր անում պայքարել «հանուն այն բանի, որ իմպերիալիզմի դեմ ուղղված բոլոր ազգային շարժումները օգտագործվեն սոցիալիստական հեղափոխության նպատակով»[15]։ Նա մերժում և ռեակցիոն էր համարում այն ազգային շարժումը, որը չի նպաստում պրոլետարիատի պատմական նպատակներին հասնելուն և, ընդհակառակը, խոչընդոտում է դրան, հակասում պրոլետարական դասակարգային և սոցիալիստական հեղափոխության շահերին։ Այսպիսի կարծր մոտեցումը բխում էր այն դոգմայից, որ բոլոր դեպքերում էլ անվերապահորեն գլխավորն ու գերակայողը կա և անպայման պիտի լինի պրոլետարական դիկտատուրայի, նրա շահերի հարցը, որին, նրա հաղթանակն ապահովելուն պիտի ենթարկել առանձին վերցրած ինքնուրույն բնույթ չունեցող ազգային հարցը։

Սակայն, ինչպես անցյալի պատմական փորձը, առավելագույնս՝ վերջին տարիներին աշխարհի, հատկապես, նախկին ԽՍՀՄ-ի հանրապետությունների ազգերի ու ժողովուրդների ազգային արժանապատվության ինքնագիտակցումն ու ինքնաճանաչումը և այդ հողի վրա՝ ազգային բուռն զարթոնքի ու շարժումների ծավալն ու թափը և դրանցով ահաբեկված իշխանությունների ռեակցիան ու գործիքակերպը, հակադեմոկրատական, ուժային միջոցների դիմելու մեթոդը՝ այդ շարժումները խեղդելու համար՝ այս ամենն ապացույցն է այն ճշմարտության, որ ազգային հարցը հասարակական կյանքում ունի ոչ թե պրոլետարական ռեհիտուտուրային ենթակա, այլ ինքնուրույն և ինքնակա բովանդակություն ու նշանակություն։ Ազգային շահերը նույնիսկ ավելի են համախմբում և պայքարի մղում մարդկանց ոչ միայն ազգային, այլև սոցիալական անարդարությունների դեմ, քան դասակարգային շահերը։ Կյան-

---

13 Նույն տեղում, հ. 25, էջ 81։

14 Նույն տեղում, հ. 14, էջ 135։

15 Նույն տեղում, հ. 30, էջ 50։

քի փորձն ապացուցեց, որ ազգի օրհասական պահերին նրա անդամները խմբավորվում են առավելագույնս ազգային շահերի շուրջ՝ ի հակակշիռ Լենինի այն թեզի, թե իբր՝ «Ամեն մի իսկական լուրջ և խոր քաղաքական հարցում խմբավորումը տեղի է ունենում ըստ դասակարգերի և ոչ թե ազգերի»[16]։

Ազգային պահանջներն ու խնդիրները ստորադասելով պրոլետարիատի դասակարգային շահերին, Լենինը պնդում էր, որ յուրաքանչյուր ազգային պահանջ, յուրաքանչյուր ազգային անջատում-ինքնորոշում պատմականորեն պիտի գնահատվեն բանվոր դասակարգի դասակարգային պայքարի տեսանկյունից։ Դրա համար էլ պրոլետարիատը, ասում էր Լենինը, «ճանաչելով իրավահավասարությունը և ազգային պետություն կազմելու հավասար իրավունքը... ամենից բարձր է գնահատում ու դասում բոլոր ազգերի պրոլետարների դաշինքը, բանվորների դասակարգային պայքարի տեսանկյունից գնահատելով ամեն մի ազգային պահանջ, ամեն մի ազգային անջատում»[17]։ Ազգային հարցին այսպիսի մոտեցումը պատճառաբանվում էր նաև «ընդհանուր» և «մասնավոր» հասկացությունների փոխհարաբերակցության Լենինյան տեսական, փիլիսոփայական բանաձևով՝ հանուն ընդհանուրի կարիքի դեպքում զիջել, նույնիսկ զոհաբերել մասնավորը, նրա շահերը կամ, ինչպես Լենինն էր ասում, երբ «Հնարավոր է, որ առանձին կոնկրետ դեպքերում մասնիկը հակասի ընդհանուրին, այդ դեպքում պետք է մասնիկը մերժել»[18] և պայքարել «հանուն մասնավորի շահերն ընդհանուրի շահերին ենթարկելու»[19], կամ՝ «հանուն միջազգային կապիտալի տապալման, մեծագույն ազգային զոհաբերությունների դիմելու ընդունակություն և պատրաստակամություն»[20] հանդես բերել։ Տվյալ դեպքում, ըստ Լենինի, ընդհանուրը պրոլետարիատի դասակարգային պայքարի, նրա դիկտատուրայի, սոցիալիստական հեղափոխության և սոցիալիզմի շահերն էին, իսկ մերժելին, ժխտելին, մասնավորը՝ ազգային հարցն էր։ Եթե նկատի ունենանք, որ նախկին Խորհրդային Միությունում այսպես կոչված պրոլետարական դիկտատուրան իրականում միահեծան Լենինյան կոմունիստական կուսակցության, իսկ ավելի ստույգ՝ նրա լիդերների դիկտատուրան էր, ապա պարզ կդառնա, որ ազգային հարցը, նրա բախտը հանձնված էր կուսակցական ղեկավար բյուրոկրատիային, որը հանդես էր գալիս որպես «ընդհանուր»՝ սոցիալիզմի շահերի մարմնավորում։

Հենց այդ տեսական սկզբունքից էին օգտվում բոլշևիկները, բռնակալ Ստալինը, երբ խորհրդային իշխանության արշալույսին (1920-ական թվականների սկզբին) հայ ազգի նկատմամբ կատարեցին հայտնի չարագործությունը՝ հաշվի չառնելով նրա շահերն ու կամքը, Հայաստանի մի զգալի մասը զոհաբերեցին Թուրքիային (Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը) ու Ադրբեջանին (Ղարաբաղն ու Նախիջևանը)։ Այդ հանցագործ կամայականությունը նաև թելադրված էր նրանով, որ Լենինն ու նրա զինակիցները նշված մուսուլմանական երկու երկրները դիտում էին սոցիալիստական հեղափոխության շահերի տեսանկյունից։ Նրանք համոզված էին, թե իբր Թուրքիան հղի է սոցիալիստական հեղափոխության մոտալուտ հաղթանակի հնարավորություններով, իսկ Ադրբեջանն էլ երկրամասում առաջինն էր խորհրդայնացել, հետևապես՝ մոտ ապագայի սոցիալիստական Թուրքիան և արդեն խորհրդայնացած Ադրբեջանը կդառնան նաև համապատասխան առաջապահիկներ և ցատկահարթակներ՝ Արևելքում սոցիալիստական հեղափոխության տարածման համար։ Հետևաբար, ինչո՞ւ չպիտի զոհաբերել ինչ-որ

16 Նույն տեղում, հ. 24, էջ 168։
17 Նույն տեղում, հ. 25, էջ 330—331։
18 Նույն տեղում, հ. 30, էջ 48։
19 Նույն տեղում, էջ 56։
20 Նույն տեղում, հ. 41, էջ 199։

հայկական հողակտորներ (ըստ զոհարերողների) հանուն այդ «վեհ» դաղափարի ու նպատակի, նամանավանդ, որ այն ժամանակի նորաստեղծ անկախ Հայկական Հանրապետությունը բոլշևիկների թյուր ու ծիծաղելի պատկերացմամբ ու հրեշավոր նպատակների առումով դիտվում էր համաշխարհային իմպերիալիզմի միջնաբերդ և Արևելքում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի ճանապարհին ծառացած խոչընդոտ, հակահեղափոխական ուժ, ինչը պիտի ոչնչացվեր, և ոչնչացրին։

Լենինյան համաշխարհային սոցիալիստական հեղափոխության մոտալուտ հաղթանակի մոլուցքով այն ժամանակ տառապում էին Լենինի բոլոր զինակիցները, այդ թվում նաև բազմաթիվ հայ բոլշևիկներ։ Թերևս հենց այդ հեղափոխական տենդն էր պատճառը, որ նրանք անհեռատեսորեն ոչ միայն չընդդիմացան հայկական հողերի զավթմանը, այլև նույնիսկ, կախարդված լենինյան տեսությամբ, կամա թե ակամա, իրենց դիրքորոշմամբ նպաստեցին այդ հակաազգային անարդարության կիրառմանը, ինչի դառը պտուղները հայ ժողովուրդը ճաշակում է առ այսօր։

Լենինի կողմից ազգային հարցի թերագնահատումը վկայվում է նաև նրա վերաբերմունքով դեպի ազգային մշակույթը։ Լենինը փաստորեն «ազգային մշակույթ» հասկացությունը չէր ընդունում և այն փոխարինում էր ինտերնացիոնալ միջազգային մշակույթով։ Այսպես կոչված «Ազգային մշակույթ» հասկացությունը - կապիտալիզմի պայմաններում նա համարում էր սոսկ «կալվածատերերի, տերտերների և բուրժուազիայի կուլտուրա»[21]։ Նա սխալ և անթույլատրելի էր համարում ազգային մշակույթի լոզունգը, «քանի որ մարդկության ամբողջ տնտեսական-քաղաքական և հոգևոր կյանքը շարունակ ավելի ինտերնացիոնալացվում է արդեն կապիտալիզմի օրով։ Սոցիալիզմն այն ինտերնացիոնալացնում է ամբողջովին»[22]։ Այս տրամաբանությունից հետևում է, որ ազգային մշակույթի լոզունգն առավել ևս անընդունելի է սոցիալիզմի օրոք։ Եվ դա փաստորեն այդպես էլ պատկերացվում ու կատարվում էր խորհրդային սոցիալիզմի ժամանակ. ազգային մշակույթը վերածվում էր համախորհրդային, համաժողովրդական, միջազգային մշակույթի։

Լենինը համոզված էր, որ «համաշխարհային բանվորական շարժումը ստեղծում և օրեցօր ավելի է զարգացնում պրոլետարիատի ինտերնացիոնալ (միջազգային) կուլտուրան»[23], որ «բանվորական դեմոկրատիայի լոզունգն» ազգային կուլտուրան» չէ, այլ դեմոկրատիզմի և համաշխարհային բանվորական շարժման ինտերնացիոնալ կուլտուրան»[24], իսկ «ազգային կուլտուրայի լոզունգը բուրժուական (հաճախ և սևհարյուրյակային-կղերական) խաբեություն է»[25]։

Ազգային մշակույթին Լենինը մոտենում էր զուտ նեղ դասակարգային սկզբունքի տեսանկյունից։ «Կա,—ասում էր նա,—երկու ազգային կուլտուրա՝ յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ»[26] և կոնկրետացնում՝ «Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան, թեև չզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործող մասսա, որի կյանքի պայմանները անխուսափելիորեն ծնում են դեմոկրատական և սոցիալիստական գաղափարախոսություն։ Բայց յուրաքանչյուր ազգի մեջ կա նաև բուրժուական (իսկ մեծ մասամբ նաև սևհարյուրյակային և կղերական) կուլտուրա, և այն էլ ոչ թե «տարրերի» ձևով, միայն, այլ տիրապետող կուլտուրայի ձևով...

21 Նույն տեղում, հ. 24, էջ 152։
22 Նույն տեղում, հ. 23, էջ 389։
23 Նույն տեղում, հ. 24, էջ 73։
24 Նույն տեղում, էջ 148։
25 Նույն տեղում, էջ 150։
26 Նույն տեղում, հ. 24, էջ 162։

մենք յուրաքանչյուր ազգային կուլտուրայից վերցնում ենք միայն նրա դեմոկրատական և նրա սոցիալիստական տարրերը, վերցնում ենք դրանք միայն և անպայման ի հակակշիռ յուրաքանչյուր ազգի բուրժուական կուլտուրայի»[27]։

Ազգային մշակույթի ամբողջական հերքումը և նրա լոկ սոցիալիստական ու դեմոկրատական տարրերն ընդունելը Լենինը պատճառաբանում էր ինտերնացիոնալիզմի գերակայությամբ. «Մենք դեմ ենք ազգային կուլտուրային՝ որպես բուրժուական նացիոնալիզմի լոզունգներից մեկի։ Մենք մինչև վերջը դեմոկրատական ու սոցիալիստական պրոլետարիատի ինտերնացիոնալ կուլտուրայի կողմն ենք»[28]։

Ըստ էության, Լենինը նկատի ունի ազգային հոգևոր մշակույթը։ Բայց նա չի բացահայտում, թե որոնք են կոնկրետ ազգային մշակույթի ընդունելի սոցիալիստական ու դեմոկրատական «տարրերը» և մերժելի «տիրապետողը»։ Ինչպե՞ս, ի՞նչ չափանիշով որոշել դրանք, բնորոշել և տարբերել իրարից։ Իսկ, թերևս, գլխավորը, մի՞թե ազգային հոգևոր մշակույթ ստեղծող և այն ներկայացնող մեծերը (օրինակ, Շեքսպիրը, Գյոթեն, Պուշկինը, Թումանյանը և այլք) արժեքավոր և ընդունելի են միայն իրենց ստեղծագործությունների, սերունդներին թողած հոգեկան ժառանգության լոկ նեղ, անորոշ դեմոկրատական ու սոցիալիստական տարրերով, այլ ոչ թե իրենց ամբողջ ժառանգությամբ, լիակատար կերպով, որով էլ (իր ամբողջությամբ) նրանք ծառայում են իրենց ծնած ժողովուրդներին և համայն մարդկությանը, արտահայտում նրանց շահերը, հոգսերը, նպատակներն ու երազներն առանց դասակարգային խտրականության։ Չպիտի նաև անտեսել, որ յուրաքանչյուր ազգային, թեկուզ և հենց բուրժուական մշակույթում կան, բացի Լենինի նշած սոցիալիստական ու դեմոկրատական տարրերից, նաև ուրիշ շատ կարևոր առաջադեմ, հումանիստական, ընդունելի համամարդկային արժեքներ։ Ազգային մշակույթի բաժանումը երկու մասի, նրա տարանջատումն ըստ դասակարգային սկզբունքի՝ նշանակում է ազգային մշակույթը գնահատել, արժեքավորել ու սերունդներին փոխանցել կիսատ-պռատ, մեծ կորուստներով, ինչը չի արտահայտում ազգի ամբողջական շահերը, նրա քաղաքակիրթ զարգացումը, առանց ազգայինի չկա և չի կարող լինել համամարդկային, ինտերնացիոնալ (միջազգային) մշակույթ։ Վերջինս ազգային մշակույթներից սերված, նրանց մնայուն որակներից գոյացած համամարդկային արժեքների հանրագումարն է։ Նշանակում է՝ համամարդկային, միջազգային լինելու համար մշակույթը նախ պիտի լինի ազգային—սա է միջազգային մշակույթի կայացման և օրինաչափ զարգացման ընթացքն ու իմաստը։

Խորհրդային սոցիալիստական հասարակարգում ազգային մշակույթը բնորոշվում էր սահմանափակ, կիսատ ձևակերպումով, այն է՝ «Բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային մշակույթ»։ Այսպիսով, մշակույթի ազգային բովանդակությունը հաշվի չէր առնվում, բացառվում, դուրս էր շպրտվում, կամ, լավագույն դեպքում, քոզարկվում, համահարթվում էր «սոցիալիստական բովանդակության» շղարշով։ Իսկ ձևն էլ ընկալվում էր հիմնականում լեզուն, որպես սոցիալիստական բովանդակության արտահայտության միջոց։ Ուրեմն, ստացվում էր ազգային մշակույթ՝ առանց ազգային բովանդակության էության և իմաստի։ Սա ազգային մշակույթը բնորոշելու ու գնահատելու սխալ, ապակողմնորոշիչ տեսական դրույթ էր, ինչը խոչընդոտում էր իսկական ազգային մշակույթի զարգացմանը, նրա բոլոր առանձնահատկություններով հանդերձ՝ և՛ բովանդակությամբ, և՛ ձևով։

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ մշակույթի մեջ ազգայինի առաջնությունն ընդունելը չպիտի վերածել ազգայնականի և ազգայնամոլության։ Դրանք միանգամայն տարբեր, հակադիր և իրարամերժ հասկացություններ

---

27 Նույն տեղում, էջ 151—152։

28 Նույն տեղում, հ. 23, էջ 257։

են և ոչ միանշանակ՝ ազգի համար։ Որքան ընդունելի ե խրախուսելի է ազգայինը, որպես ազգի քաղաքակիրթ զարգացմանը նոյաստող երևույթ, նույնքան մերժելի և դատապարտելի են ազգայնականն ու ազգայնամոլայինը, որոնք ազդր ապակողմնորոշում ու տանում են դեպի մեկուսացում և խոչընդոտում նրա տոաջադեմ զարգացումը։

Այսպիսով, վերը շարադրվածից երևում է, որ իրոք, Լենինն արժանվույնը չէր տալիս ազգային հարցին, նրա գնահատմանը, տեղին, ղերին ու նշանակությանը հասարակական կյանքում։ Իսկ ինչպե՞ս էր նա ընկալում ազգային հարցի լուծումը, ինչ նախադրյալներ-պայմաններ և ուղիներ էր տեսնում դրա համար։ Ազգային հարցի լուծումը ևս Լենինը կապում էր պրոլետարիատի դասակարգային պայքարի ու դիկտատուրայի, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի և սոցիալիզմի կառուցման փաստի հետ։ Ըստ Լենինի, միայն այս նախադրյալների ու գործոնների առկայության պայմաններում էր հնարավոր նաև ազգային հարցի արդարացի լուծումը։

Այդպիսի լուծման հիմնական ուղին Լենինը համարում էր ազգի ինքնորոշման իրավունքի՝ ընդհուպ մինչև անջատում և առանձին-սեփական պետության ստեղծման իրավունքի կիրառումը։ Սա Լենինի ստեղծած բոլշևիկյան, կոմունիստական կուսակցության II համագումարում 1903 թ. ընդունված, հենց առաջին ծրագրում սահմանադրված զլխավոր, պահանջն էր ազգային հարցի մասին։ Եվ դա միանգամայն ճիշտ, արդարացի և ընդունելի պահանջ էր և է։ Սակայն այստեղ ևս Լենինը մինչև վերջ հետևողական չէր և առաջադրում էր հակասական, իրարամերժ թեզեր ու դրույթներ։

Լենինը բազմիցս է խոսել ու գրել ազդերի ինքնորոշման օգտին, դրա տակ հասկանալով «միայն քաղաքական ինքնորոշումը, պետական ինքնուրույնությունը, ազգային պետության կազմավորումը»[29]։ Նա «տարօրինակ, հրեշավոր սխալ»[30] էր համարում դա չընդունելը և ասում էր, որ «Ռուսաստանի կազմի մեջ մտնող բոլոր ազգերին պետք է ազատորեն անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունք վերապահվի»[31]։ Ամփոփված տալով իր գնահատականը, Լենինն ասում էր. «Անջատման ազատությունը» դեմոկրատիզմի բարձրագույն արտահայտությունն է»[32]։ Բայց միաժամանակ նա սոցիալիզմի նպատակներից էր համարում նաև մանր պետությունների ոչնչացումը[33], որոնցից էին, անշուշտ, նաև փոքր-մանր ազգերի ինքնորոշման հետևանքով կազմված պետությունները և նույնիսկ առաջին հերթին հենց դրանք։ Որպես կուսակցության ծրագրային պահանջ առաջադրելով «պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը»[34], պայքարելով հանուն ազգերի պետականորեն ինքնորոշման իրավունքի պահանջի ճանաչման, որն «ինքնին նշանակում է միայն այն, «որ մենք, պրոլետարիատի կուսակցությունը, միշտ և անպայման պետք է դեմ լինենք ժողովրդի ինքնորոշման վրա դրսից բռնությամբ կամ անարդարությամբ ազդելու ամեն մի փորձի»[35]։ Միաժամանակ հակասելով ինքն իրեն, Լենինն ասում էր, որ «ինքնորոշման ազատության համար պայքարի անպայման ճանաչումն ամենևին չի պարտավորեցնում մեզ պաշտպանելու ազգային ինքնորոշման ամեն մի պահանջ։ Սոցիալ-դեմոկրատիան իբրև պրոլետարիատի կուսակցություն, իր դրական և գլխավոր խնդիրն է համարում աջակցել ոչ թե ժողովուրդների և ազգերի, այլ յուրաքանչյուր ազգության մեջ պրոլետարիատի ինքնորոշմանը... և միայն առանձին բացառիկ դեպքերում

29 Նույն տեղում, հ. 25, էջ 316։
30 Նույն տեղում, հ. 31, էջ 529։
31 Նույն տեղում, էջ 538։
32 Նույն տեղում, հ. 27, էջ 538։
33 Նույն տեղում, էջ 310։
34 Նույն տեղում, հ. 6, էջ 261։
35 Նույն տեղում, հ. 7, էջ 133։

մենք կարող ենք առաջադրել և ակտիվորեն պաշտպանել այն պահանջները, որոնք տանում են դեպի մի նոր դասակարգային պետության ստեղծումը...»[36] (ընդգծումը մերն է—Ն. Թ.)։ Մի այլ առիթով նա նկատել է. «Ազգերի ինքնորոշման հարցում, ինչպես և ամեն մի այլ հարցում, ամենից առաջ և ամենից ավելի մեզ հետաքրքրում է պրոլետարիատի ինքնորոշումը ազգի ներսում»[37]։

Ազգերի ինքնորոշման իրավունքի պահանջի ընդունումը կամ մերժումը Լենինը պայմանավորում էր պրոլետարական դասակարգային պայքարի շահերով։ «Հենց այդ պայքարի շահերին մենք պետք է ենթարկենք,—ընդգծում էր նա,—ազգային ինքնորոշման պահանջը։ Հենց այդ պայմանի մեջ է ազգային հարցի՝ մեր դրվածքի տարբերությունը նրա բուրժուա-դեմոկրատական դրվածքից։ Բուրժուական դեմոկրատը (ինչպես և նրա հետքերով գնացող ժամանակակից սոցիալիստական օպորտունիստը) երևակայում է, թե դեմոկրատիան վերացնում է դասակարգային պայքարը, ուստի և իր բոլոր քաղաքական պահանջներն առաջադրում է վերացականորեն, հախուռն, «անպայմանորեն», «ամբողջ ժողովրդի» շահերի տեսակետից կամ նույնիսկ հավիտենական բարոյական տկզբունքի՝ բացարձակի տեսակետից։ Սոցիալ-դեմոկրատը (իմա նաև Լենինը—Ն. Թ.) անողոքաբար մերկացնում է այդ բուրժուական պատրանքը ամենուրեք և միշտ, արտահայտված լինի դա վերացական իդեալիստական փիլիսոփայության մեջ, թե ազգային անկախության անվերապահ պահանջի դրումով... մարքսիստը չի կարող այլ կերպ, քան պայմանականորեն և հենց վերև հիշված պայմանով ճանաչել ազգային անկախության պահանջը»...[38]։ Այս հաշվառումով էլ Լենինը ազգերի ինքնորոշման ընդունելը պարտադիր ու նպատակահարմար չէր համարում, պատճառաբանելով, թե «Ինքնորոշման իրավունքը մեկ բան է, իսկ ինքնորոշման նպատակահարմարությունը... այլ բան»[39]։ Նշանակում է, կարելի է ընդունել իրավունքը, բայց չիրականացնել այն, այսինքն՝ ասել մի բան, բայց կատարել հակառակը։ Հենց այդպես էլ դա եղել է նախկին Խորհրդային Միությունում ազգերի ինքնորոշման հարցում և շարունակվում է նաև այսօր ԱՊՀ-ում՝ դարձյալ ինչ-ինչ պայմանների աննպատակահարմարության պատրվակի տակ։

Իհարկե, ինչպես հասարակական կյանքի յուրաքանչյուր կարևոր հարցի, այնպես էլ ազգերի ինքնորոշման լուծման ճիշտ ուղի գտնելու համար անհրաժեշտ է ելնել գոյություն ունեցող իրադրությունից, հաշվի առնել բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները, սա անժխտելի ճշմարտություն է։ Բայց անընդունելի է, երբ Լենինը այդքան կտրականորեն, դոգմատիկ կերպով ու լիովին ազգերի ինքնորոշումը պայմանավորում էր զուտ պրոլետարական դասակարգային պայքարի ու դիկտատուրայի, սոցիալիստական հեղափոխության ու սոցիալիզմի շահերով, նրանց կիրառման անհրաժեշտությամբ ու հնարավորությամբ։ Հարց է առաջանում, իսկ եթե երկրում այդպիսի նախադրյալներ ստեղծելու պայմաններ չկան, իսկ ազգի ինքնորոշման հարցը կյանքի հրամայական, իմպերատիվ պահանջ է դարձել, այս պարագայո՞ւմ էլ հրաժարվել ազգի ինքնորոշման պահանջից։ Ըստ Լենինի հարցադրման տրամաբանության ստացվում է, որ այո՛, պիտի հրաժարվել, չընդունել, քանի որ «մեր ծրագիրն ասում է,—պատճառաբանում էր Լենինը,—թե մենք ընդունում ենք ազգային ինքնորոշումը. եթե կոնկրետ պայմանները մեզ ստիպեն արտահայտվել որոշ ազգի ինքնորոշման օգտին, նրա լիակատար անկախության օգտին»[40] (ընդգծումը մերն է—Ն. Թ.)։ Այսպիսով՝ Լենինը ինք-

---

36 Նույն տեղում, հ. 7, էջ 294։

37 Նույն տեղում, հ. 25, էջ 352։

38 Նույն տեղում, հ. 7, էջ 296—297։

39 Նույն տեղում, հ. 24, էջ 256։

40 Նույն տեղում, հ. 10, էջ 185։

նորոշման իրավունքն ընդունում էր սոսկ կոնկրետ պայմանների ճնշման տակ և այն էլ միայն «որոշ» և ոչ բոլոր ազգերի, կամ «ողջ ժողովրդի» համար անպայմանորեն ու «բացարձակորեն», ինչպես դա ընդունում էր բուրժուական դեմոկրատը, որի համար նա Լենինի կողմից անողոք քննադատության էր ենթարկվում։ Մինչդեռ, իրավացի էր քննադատվողը և ոչ թե քննադատողը՝ այո, ինքնորոշումը պիտի տարածվի անպայմանորեն ու «բացարձակորեն» «ողջ ժողովրդի», բոլոր ազգերի վրա՝ առանց որևէ պայմանի։ Սակայն, այդպիսի պայմաններ-պատնեշներ, ցանկացած դեպքում, միշտ էլ ստեղծվում-հորինվում են ազգերի ինքնորոշման հակառակորդների կողմից։ Դրա՝ մեր օրերի համոզիչ օրինակն է ղարաբաղահայության ինքնորոշման՝ չընդունելը Ադրբեջանի, նրան սատար կանգնած Թուրքիայի, նրանց ընդառաջող որոշ այլ պետությունների և միջազգային իրավասու կազմակերպությունների կողմից, որոնք իրենց դիրքորոշումը պատճառաբանում են Ադրբեջանի իբր տարածքա-սահմանային ամբողջականությունը չխախտելու պայմանի պատրվակով։ Մինչդեռ «մոռացվում», հաշվի չի առնվում այն պատմական փաստը, որ այդպիսի իրական, և ոչ թե շինծու, խախտում շատ ավելի առաջ (1920-ական թվականների սկզբին) կատարվել է հենց Ղարաբաղի նկատմամբ, երբ այդ բուն հայկական տարածքն իր առ այսօր ճնշող մեծամասնությունը կազմող հայ բնակչությամբ կամայականորեն անջատվել է Հայաստանից և մտցվել Ադրբեջանի կազմի մեջ՝ լենինյան ձևական ինքնավարության (ավտոնոմիայի) կարգավիճակով, իսկ իրականում միանգամայն ղուրկ դրանից և ամբողջովին ենթակա Ադրբեջանին, նրա իշխանությունների կամայականությանն ու քմահաճույքներին։ Եվ հենց դա էլ հասցրեց այսօրվա ղարաբաղ-ադրբեջանական կոնֆլիկտին ու պատերազմին։ Իսկ դրան նպաստող տեսական նախադրյալները ազգերի ինքնորոշման լենինյան հակասական, իրարամերժ և ապակողմնորոշող դրույթները պիտի համարել։ Ընդունելով անջատման իրավունքը, միաժամանակ Լենինը ըստ էության դա մերժում էր։ «Անջատումը,—ասում էր նա,—բնավ էլ մեր պլանը չէ։ Մենք բնավ չենք քարոզում անջատում։ Ընդհանրապես, մենք անջատման դեմ ենք, բայց մենք անջատման իրավունքի կողմ ենք՝ նկատի ունենալով սեհարյուրյակային վելիկոռուսական նացիոնալիզմը, որն այնպես է պղծել ազգային համակեցության գործը, որ երբեմն ավելի մեծ կապ կստացվի ազատ անջատումից հետո։

Ինքնորոշման իրավունքը բացառություն է կենտրոնացման մեր ընդհանուր նախադրյալից։ Այս բացառությունն անպայման անհրաժեշտ է վելիկոռուսական սեհարյուրյակային նացիոնալիզմի հանդեպ և այս բացառությունից մազաչափ հրաժարվելը օպորտունիզմ է... մի հիմար խաղ է, որ վելիկոռուսական սեհարյուրյակային նացիոնալիզմին է ձեռնտու։ Բայց բացառությունը չի կարելի լայնորեն մեկնաբանել։ Այստեղ, բացի անջատման իրավունքից, ոչինչ, բացարձակապես ոչինչ չկա և չպետք է լինի»[41]։

Այսպիսով, Լենինը մեկ, ինչպես տեսանք վերը բերված նրա խոսքերից, ազգերի ինքնորոշման իմաստն ու էությունը տեսնում էր նրանց պետականորեն անջատման մեջ, դա պայմանավորելով պրոլետարական դիկտատուրայի, սոցիալիստական հեղափոխության և սոցիալիզմի շահերին նպաստելու կամ խանգարելու փաստով, իսկ այժմ էլ նա կտրականապես, առանց որևէ պայմանի, դեմ է անջատման փաստին և այն ընդունում է լոկ որպես իրավունք և այն էլ միայն որպես բացառություն՝ ի հակադրումն վելիկոռուսների սեհարյուրյակային նացիոնալիզմի։ Իսկ ինքնավարությունը նա ընդունում է միայն պետության ներսում, ոչ նրանից դուրս՝ անջատված, այս պարագայում էլ դարձյալ իրավունքի ընդունման ձևով, այլ ոչ թե իրական փաստի։ Այսպիսով՝ ազգերի ինքնորոշումը Լենինն ընդունում է ձևականորեն, բայց ոչ փաստականորեն, իբրև պետականորեն անջատման ակտի։

---

41 Նույն տեղում, հ. 48, էջ 291։

Լենինը փաստորեն դեմ էր նաև ազգերի ինքնավարությանը։ Նա պարզորոշ էր ասում. «Պրոլետարիատի գործը չէ... ազգային ինքնավարություն մարզել, պահանջներ առաջադրել, որոնք անխուսափելիորեն հանգում են ինքնավար դասակարգային պետություն ստեղծելու պահանջին»[42]։

Լենինը կողմնակից էր խոշոր կենտրոնացած պետության՝ ստեղծված իր հորինած այսպես կոչված «դեմոկրատական ցենտրալիզմի» սկզբունքի վրա։ Նա ասում էր. «Կենտրոնացած խոշոր պետությունը մի հսկայական պատմական քայլ առաջ է միջնադարյան մասնատվածությունից դեպի ողջ աշխարհի ապագա սոցիալիստական միասնությունը, և այլ կերպ, քան նման պետության միջոցով... չկա՛ և չի՛ կարող լինել ուղի դեպի սոցիալիզմը։ Բայց անթույլատրելի կլիներ մոռանալ, որ կենտրոնացումը պաշտպանելով, մենք պաշտպանում ենք բացառապես դեմոկրատական կենտրոնացումը»[43]։ Անշուշտ, իրական դեմոկրատական սկզբունքի վրա հիմնված կենտրոնացած խոշոր պետությունը դրական, առաջադիմական երևույթ է միջնադարյան մասնատվածության համեմատ և այս առումով Լենինի դիրքորոշումը ճիշտ է։ Սակայն նրա առաջադրած «դեմոկրատական ցենտրալիզմ»-ի սկզբունքն անհիմն ու շինծու էր և իրականում վերածվեց բյուրոկրատական ցենտրալիզմի, չնայած նա շարունակ ընդգծում էր, թե դեմոկրատական ցենտրալիզմը որքան շատ է տարբերվում բյուրոկրատական ցենտրալիզմից[44]։ Սակայն այդ երկու սկզբունքներն ըստ էության նույն ուղիներն են, որ տանում են դեպի տոտալիտար դիկտատուրական ռեժիմ։ «Դեմոկրատական» տերմինը լոկ քող է այդ ռեժիմին ձգտող բյուրակրատիայի դիմակի վրա։ Հիրավի, դեմոկրատիզմը և ցենտրալիզմը՝ անհամատեղելի, հակոտնյա, իրարամերժ կենտրոնախույս սկզբունքներ, ուժեր են, որոնց միահյուսվածության վրա հիմնված պետությունը չի կարող հարատևել, ինչը և ապացուցեց «դեմոկրատական ցենտրալիզմի» վրա հիմնված ԽՍՀՄ-ի սրընթաց փլուզումը, որն ի դեպ կատարվեց ցենտրալիզմի վրա դեմոկրատիզմի ճնշմամբ։ Դրան նպաստեց նաև պետության սահմանների կառուցման մասին Լենինի սխալ և ազգամիջյան բախումների իրական վտանգ պարունակող դրույթը։

Խորհրդային իշխանության հաստատման հենց առաջին տարիներին Լենինն ասում էր. «Մեզ համար կարևորն այն չէ, թե որտեղ է անցնում պետական սահմանը, այլ այն, որ պահպանվի դաշինքը բոլոր ազգերի աշխատավորների միջև...»[45]։ Հարց է առաջանում՝ իսկ կպահպանվի՞ արդյոք Լենինի՝ ցանկացած ազգերի աշխատավորների դաշինքը, եթե պետական սահմանների անցկացումը կարևոր չլինելով՝ դրանք հաստատվեն ազգային ինքնորոշման և տարածքային շահերին հակառակ, ինչպես դա կատարվել էր նախկին Խորհրդային երկրում որոշ, հատկապես փոքր ազգերի կամ նրանց օտար ազգային միջավայրում ստեղծված բեկորների-խմբերի, այսպես կոչվող «անկլավների», նկատմամբ հենց Լենինի օրոք և նրա ղեկավար մասնակցությամբ։ Այստեղ ևս կյանքն ապացուցեց, որ Լենինը սխալվում էր նաև պետական սահմանների իր ըմբռնումով։ Կարծում ենք, որ եթե Խորհրդային Միության կառուցման ժամանակ կարևորություն տրվեր պետական սահմանների անցկացմանը և համապատասխանաբար արդարացիորեն հաշվի առնվեր ազգային տարածքային պատկանելության հանգամանքը, ապա, թերևս չէին առաջանա այն վեճերը, կոնֆլիկտներն ու ընդհարումները, որոնք բռնկվեցին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո։ Կյանքի փորձը ցույց տվեց, որ առանց ազգային պետական սահմանների կարևորությունը, դրանց առաջնակարգ լինելու դերն ու նշանակությունը հասկանալու և ընդունելու և ըստ այդմ էլ սրդարացի իրականացնելու, չի կարող պահպանվել, առավել ևս՝ ստեղծվել

42 Նույն տեղում, հ. 7, էջ 132։

43 Նույն տեղում, հ. 24, էջ 179—180։

44 Նույն տեղում, հ. 36, էջ 187։

45 Նույն տեղում, հ. 35, էջ 134։

բոլոր ազգերի աշխատավորների դաշինքն ու միությունը, ինչպես համոզված էր Լենինը։ Զարդարացավ նաև նրա այն համոզմունքը, որ միայն սոցիալիզմի օրոք են սահմանները որոշվել «դեմոկրատորեն, այսինքն՝ համաձայն բնակչության կամքի ու «հակումների»[46]։ Իրականում շատ դեպքերում նախկին «սոցիալիզմի» երկրում կատարվեց միանգամայն հակառակը՝ սահմանները որոշվեցին կուսակցության լիդերների և այլ իշխանավորների կամայականությամբ, հակառակ ազգի, ժողովրդի, բնակչության «համակրանքի», և դա ևս հետևանքն էր այն լենինյան դրվագի, թե՝ «քանի որ մենք ձգտում ենք լրիվ ոչնչացնել պետական սահմանները», ապա նրանց որոշումը «հիմնական հարց չէ, կարևոր չէ, երկրորդական է (ընդգծումը մերն է—Ն. Թ.)»[47], կամ՝ «Ինտերնացիոնալիստի համար պետության սահմանների հարցը երկրորդական, եթե չասենք՝ տասներորդական հարց է»[48]։ Բայց միաժամանակ, դարձյալ հակասելով ինքն իրեն, Լենինը հակառակ էր, չէր ընդունում, իր իսկ խոսքերով ասած, «սոցիալիստական հեղափոխության մեթոդը՝ «կորշեն սահմանները» լոզունգը, քանի որ «մենք,—ասում էր նա,—կողմնակից ենք պետության անհրաժեշտության, իսկ պետությունը ենթադրում է սահմաններ»։ Բայց «ինչ է նշանակում՝ «կորշեն սահմանները»,—հարցնում է Լենինը և ինքն էլ պատասխանում՝ «Այստեղ սկսվում է անարխիան... Սոցիալիստական հեղափոխության «մեթոդը»՝ «կորշեն սահմանները» լոզունգը—գա պարզապես շփոթ է... Այն ժամանակ ճիշտ կլինի «կորշեն սահմանները» լոզունգը, երբ սոցիալիստական հեղափոխությունը կդառնա իրականություն, այլ ոչ մեթոդ...»[49], այսինքն՝ սոցիալիստական հասարակարգում։ Սակայն սա ևս մոլորվածություն էր, որովհետև հենց խորհրդային սոցիալիստական հասարակարգում, նրա ներսում ազգային պետական կառուցվածքների սահմանների խեղվածության հետևանքով էր, որ ԽՍՀՄ-ի կազմալուծվելուց հետո սկսվեցին սահմանատարածքային վեճերն ու բախումները։ Նշանակում է, «կորշեն սահմանները» լոզունգը ճիշտ չէ նաև սոցիալիզմի պայմաններում, համենայն դեպս՝ այն սոցիալիզմի, որը կառուցվել էր սոցիալիստական հեղափոխության իրականություն դառնալուց հետո և որի պայմաններում ի կատարումն առաջնորդի տեսակետի, այն կարծիքն էր քարոզվում, թե իբր ԽՍՀՄ-ում փաստորեն չկան ազգային պետական սահմաններ, նրանց բուն հասկացությամբ, իմաստով, թե նրանք կրում են ձևական բնույթ։ Եվ խորհրդային եղբայրական ազգերի ու ժողովուրդների միջև իբր չկան ինչպես ոչ մի, այնպես էլ տարածքասահմանային հակասություններ և դրանով պայմանավորող հնարավոր վեճեր ու կոնֆլիկտներ։ Իսկ եթե նույնիսկ այդպիսի իրավիճակ ստեղծվի էլ, ապա հարցը կլուծվի խաղաղ ճանապարհով, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով և եղբայրական համերաշխ համաձայնությամբ, արդարացի, ինչպես որ դա իբր թե հատուկ է սոցիալիզմին, բխում է նրա էությունից։ Այսպես էր կողմնորոշում կոմունիստական կուսակցությունը, որի ծրագրում սահմանված էր. «ՍՍՌՄ-ի շրջանակներում Միութենական ռեսպուբլիկաների միջև եղած սահմանները ավելի ու ավելի են կորցնում իրենց երբեմնի նշանակությունը...»[50]։ Սխալ և ապակողմնորոշիչ էր նաև Լենինի այն տեսակետը, թե իբր սոցիալիզմի պայմաններում տեղի է ունենում ազգերի միաձուլում։ Այդ մասին նա ասել է բազմիցս, որպես նպատակ՝ անհապաղ կատարելու խնդիր[51]։ Եվ ի կատարումն Լենինի

---

46 Նույն տեղում, հ. 30, էջ 26։

47 Նույն տեղում, հ. 40, էջ 52։

48 Նույն տեղում, հ. 40, էջ 24։

49 Նույն տեղում, հ. 31, էջ 532—534։

50 Սովետական Միության կոմունիստական պարտիայի ծրագիրը՝ ընդունված ՍՄԿՊ համագումարի կողմից, Երևան, 1961, էջ 135։

51 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 166—167, էջ 289—291, հ. 27, էջ 310, հ. 30, էջ 26, հ. 31, էջ 203—204։

առաջադրած այդ խնդրի, կուսակցական և պետական ֆունկցիոներները չանում էին դա ապացուցել պրակտիկ գործունեությամբ, իսկ ազգային հարցի ուսումնասիրողները՝ տեսականորեն՝ իրենց աշխատություններում։ Սակայն երկու դեպքում էլ նենգափոխվում էր ազգերի օրինաչափ զարգացման բուն ընթացքն ու իրողությունը։ Հակասական, իրարամերժ, ապակողմնորոշիչ և անընդունելի էին նաև Լենինի առաջադրած գործելակերպի ուղիները ճնշող և ճնշվող ազգերի ղեկավար ուժերի համար։ Ըստ նրանց՝ ճնշող ազգերի ներկայացուցիչները պիտի գործեն հանուն անջատման, իսկ ճնշվող ազգերինը՝ միացման։ Դա «նշանակի,—ասում էր Լենինը,—տարբեր ելակետներից դեպի մեկ նպատակ (ազգերի միաձուլում), ոմանք կգնան այդպես, մյուսները՝ այլ կերպ»[52]։ Ավելի կոնկրետ՝ «Ռուս սոցիալիստները պետք է ձգտեն հասնելու ճնշված ազգերի անջատվելու ազատության, ճնշված ազգերի սոցիալիստները պետք է պաշտպանեն միացման ազատությունը, թե՛ մեկը, թե՛ մյուսը պետք է ձևականորեն տարբեր (ըստ էության միևնույն) ճանապարհով ընթանան դեպի միասնական նպատակի՝ դեպի պրոլետարիատի ինտերնացիոնալ կազմակերպություն»[53]։ Լենինը խստագույնս քննադատում էր ընդդիմախոսներին այս հարցում, առաջ տանելով իր սխալ տեսակետը։ Սակայն Լենինի համառությունն անհիմն էր։ Դա ևս ապացուցվում է կյանքի, պատմության փորձով, մասնավորապես, դարձյալ ԽՍՀՄ-ի փլուզման և դրանից հետո նախկին հանրապետությունների և նրանց մեջ ընդգրկված ազգերի ու ազգային խմբերի պետական օրգանների ու ղեկավարների դիրքորոշմամբ՝ ինքնորոշման հարցում։ Ակնհայտ է, որ ճնշող ազգերի ներկայացուցիչները բնավ էլ չեն ցանկանում ճնշվող ազգերի անջատումը և ամեն կերպ, ընդհուպ մինչև զինված ուժի դիմելը, խոչընդոտում են դրան։ Իսկ ճնշված ազգերը և նրանց ղեկավարները միայն անջատման, անկախության են ձգտում և ոչ թե միացման, նամանավանդ՝ նախկին Խորհրդային Միության տեսքով, այսինքն այնպես, ինչպես Լենինն էր նախագծել և իրականացրել։ Հետևապես, պատրանք էին նաև Լենինի նշած ուղիները ճնշող և ճնշված ազգերի ղեկավար օրգանների և անձանց գործելակերպի համար՝ ազգերի ինքնորոշման գործում։

Ամփոփելով, ասենք, որ ազգային հարցի լենինյան կոնցեպցիան չէր կարող լինել և չեղավ այդ հարցի լուծման ճիշտ ու հավաստի ուղենիշը։ Ընդհակառակը, այն իր հակասական, իրարամերժ դրույթներով ապակողմնորոշիչ ելակետ էր ազգային հարցի, նրա ճիշտ գնահատման, դերի, տեղի ու նշանակության մասին հասարակական կյանքում և ազգերի ինքնորոշման գործում։ Ազգային հարցի լենինյան մտակառույցի սկզբունքները փաստորեն ազգամիջյան հակամարտությունների ու կոնֆլիկտների տեսական նախադրյալները հանդիսացան։ Իսկ դա հանգեցրեց լենինյան մտակառույցի նույնիսկ ճիշտ, ընդունելի դրույթների ու թեզերի խեղաթյուրմանն ու նենգափոխմանը։ Դրան մեծագույնս նպաստում էր, հատկապես, հարցի դասակարգային ըմբռնումն ու նրա լուծումն այդ դիրքերից։ Դա լենինյան մտակառույցի, մարքսիզմի ընդհանրապես, մեր կարծիքով, ամենաարատավոր կողմն է։ Լենինի մեծ սխալն այն էր, որ նա սոցիալական, ազգային բոլոր հարցերը դիտում և լուծում էր նեղ դասակարգային պայքարի տեսանկյունով։ Նույնիսկ ամբողջական, միասնական ազգը նա դիտում էր դասակարգային առումով, հաշվելով, որ յուրաքանչյուր ազգ բաղկացած է երկու տարբեր ազգերից—այդպիսիք համարելով լայն տասնյակ միլիոնավոր աշխատավոր մասսաները և մի բուռ շահագործողները։ Այսպիսով՝ միասնական ազգը, ըստ Լենինի, մեխանիկաբար, արհեստականորեն բաժանվում, տարրալուծվում էր երկու հակադիր ու հակամարտ մասերի՝ դասակարգերի, որոնց միջև չկան և չեն կարող լինել ընդհանուր համազգային շահեր, նպատակներ ու խնդիր-

---

52 Նույն տեղում, հ. 30, էջ 81։

53 Նույն տեղում, հ. 31, էջ 536։

ներ, այլ կան միայն անհամատեղելի ու անհաշտելի հակասություններ, առճակատում, պայքար ու թշնամանք։ Ինչ փույթ, որ այդ ազգի այսպես կոչված-«մի բուռն շահագործողից» էին նաև, օրինակ, ռուսական Մորոզովները, հայկական Լազարյանները, Մանթաշյանները, Գյուլբենկյանները, Մանուկյանները և անցյալի ու ներկայի այլ ոչ քիչ մեծահարուստ իսկական հայրենասերներ, որոնց ազնիվ, անշահախնդիր բարերար գործն ու ծառայությունը սեփական ազգի հանդեպ, նրա զարգացման, բարգավաճման բնագավառում անհնարին է ժխտել ու մոռանալ, առավել ևս՝ նենգափոխել։ Միակողմանի, ոչ մի դրական բան չտեսնելով էր մոտենում Լենինը նաև բոլոր կապիտալիստական պետությունների գործունեությանը տվյալ ազգի աշխատավորների նկատմամբ։ Ռուսական պետության մասին, օրինակ, նա ասում էր, որ «Ցարիզմը բնակչության... 9/10-ին ո՞չ միայն ճնշում է տնտեսապես ու քաղաքականապես, այլև բարոյալքում, ստորացնում, պատվազրկում, անբարոյականացնում է նրան, սովորեցնելով ճնշել ուրիշ ժողովուրդների, սովորեցնելով իր խայտառակությունը քողարկել կեղծավոր, իբրև հայրենասիրական ֆրազներով»[54]։

Լենինի այս խոսքերը մենք վկայակոչեցինք ոչ թե ցարիզմն արդարացնելու նպատակով, չնայած չպիտի ժխտել, որ բոլոր դաժանություններով հանդերձ, ցարիզմը միաժամանակ ոչ քիչ դրական, օգտակար գործեր է կատարել ազգերի, ժողովուրդների համար, ինչը Լենինը չի ընդունում։ Լենինի և նրա համախոհների կողմից քարացված դոգմա-կաթեխիզիս դարձված այդ դասակարգային սկզբունքը հերքվում է իրական կյանքի, մարդկանց, ազգերի, ժողովուրդների, պետությունների և հենց իրենց դասակարգերի փոխհարաբերության փորձով, այսինքն՝ պրակտիկայով՝ ճշմարտության չափանիշով։ Այդ է վկայում նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո առաջացած անկախ համաբապետություններին ցույց տրվող այսօրվա մարդասիրական օգնությունը հարուստ կապիտալիստական երկրների, մասնավորապես ԱՄՆ-ի կողմից։ Սա ևս հերքում է Լենինի նեղ դասակարգային մտածելակերպն ու մոտեցումն ազգերի ու ազգային հարցի վերաբերյալ։ Միաժամանակ չպիտի մոռանալ նաև այն փաստը, որ աշխատավոր զանգվածներից էլ ամենևին բոլորը չեն, որ ապրում ու գործում են ազգի ընդհանուր շահերի ու հոգսերի նկատառումով, նվիրված նրանց կատարմանը։

Հետաքրքիր ու բնորոշ է, որ ազգը երկու հակադիր դասակարգերի բաժանման տրամաբանությունը հանգեցնում է նրան, որ Լենինը նույնիսկ չի ընդունում «ժողովուրդների եղբայրության» լոզունգը։ Ահա թե ինչ է գրում նա. «Ի տարբերություն բուրժուական դեմոկրատների, մենք դնում ենք ոչ թե ժողովուրդների եղբայրության, այլ բոլոր ժողովուրդների բանվորների եղբայրության լոզունգը, որովհետև մենք չենք վստահում բոլոր երկրների բուրժուազիային (ազգի փոքր մասը կազմող դասակարգը—Ն. Թ.), թշնամի ենք համարում նրան»[55]։

Լենինն առանձնապես մեծ տեղ ու դեր էր տալիս պրոլետարական դասակարգային պայքարին։ Նույնիսկ պրոլետարիատի վերաբերմունքը երկրի, հայրենիքի նկատմամբ պայմանավորվում էր այդ պայքարի շահերով։ Այսպես՝ ընդունելով, որ պրոլետարիատը չի կարող անտարբեր մնալ իր երկրի ճակատագրի հանդեպ, գրում էր. «Բայց երկրի ճակատագիրը նրան այն չափով է հետաքրքրում, որչափով դա վերաբերում է նրա դասակարգային պայքարին և ոչ թե «սոցիալ-դեմոկրատի բերանում միանգամայն անպատշաճ հնչող բուրժուական ինչ-որ «հայրենասիրության» պատճառով»[56]։ Նշանակում է, պրոլետարական պայքարից դուրս չկա «հայրենասիրություն» հասկացություն՝ ազգային կամ համամարդկային առումով, այլ կա միայն «ինչ-որ բուրժուական» չակերտավոր «հայրենասիրություն»։

54 Նույն տեղում, հ. 26, էջ 127։

55 Նույն տեղում, հ. 34, էջ 479։

56 Նույն տեղում, հ. 17, էջ 227։

Մենք համառոտակի կանգ առանք ազգային հարցի լենինյան կոնցեպցիայի միայն երկու կարևոր ասպեկտի վրա, բոլորովին շրջանցելով ուրիշ ոչ քիչ կարևոր ասպեկտներ։ Սակայն, թվում է, շարադրածից էլ կարելի է ամբողջական ու ճիշտ պատկերացում ստանալ այն մասին, թե ինչպիսի բացասական, նույնիսկ վնասակար, գեր են կատարել այդ դոգմատիկ սկզբունքները, դրույթներն ու թեզերը ազգային հարցի ուսումնասիրման և նրա պրակտիկ-գործնական լուծման բնագավառում։

Ափսոսանքով և ինքնաքննադատաբար պիտի ասել, որ համոզված լինելով լենինյան կոնցեպցիայի ճշմարտության մեջ, հավատալով և ղեկավարվելով նրանով, նախկին Խորհրդային Միության ազգային հարցի ուսումնասիրողները, նաև տողերիս հեղինակը, այդ հարցի սխալ լուսաբանման մեջ իրենց բացասական ներդրումն են արել։ Այժմ, երբ ազատ մտածելու ու գրելու բարենպաստ մթնոլորտ է տիրում, անհրաժեշտ ու հրատապ խնդիր է՝ ստեղծել մարքս-լենինյան տեսական դոգմաներից շղթայազերծված, իսկական գիտական բարձր մակարդակի ուսումնասիրություններ ազգային հարցի, նրա առանձին ասպեկտների, ինչպես առհասարակ նաև հասարակական գիտությունների բնագավառի հիմնահարցի մասին։ Այդ խնդիրների լուծմանն ակտիվորեն մասնակցելը նաև մեր հանրապետության հասարակագետների հրատապ և կարևորագույն խնդիրն ու պարտքն է և, ինչու չէ, նաև նրանց ազգանվեր պատվավոր գործը, քանի որ խորհրդային ժամանակաշրջանում քիչ չի աղավաղվել, խեղաթյուրվել ու նենգափոխվել նաև մեր ժողովրդի պատմությունը։

КРИТИЧЕСКИЙ ВЗГЛЯД НА ЛЕНИНСКУЮ КОНЦЕПЦИЮ НАЦИОНАЛЬНОГО ВОПРОСА

Н. А. ТАВАКАЛЯН

Резюме

В бывшем Советском Союзе ленинская концепция национального вопроса считалась общепризнанным, единственно верным теоретическим ориентиром для правильного изучения и решения этого вопроса. Но жизнь опровергла это ложное представление.

Ленин в сущности недооценивал и умалял место и значение национального вопроса, его самостоятельную роль в общественной жизни. Он как ортодоксальный марксист первенство отдавал диктатуре пролетариата, интересам которой целиком и полностью подчинял национальный вопрос, требуя оценивать «под углом зрения классовой борьбы рабочих всякое национальное требование, всякое национальное отделение». С этих пролетарско-классовых позиций Ленин рассматривал и пути решения национального вопроса, обуславливая его исключительно возможностью победы социалистической революции, диктатуры пролетариата и построения социализма. Гарантию решения национального вопроса он видел в праве наций на самоопределение вплоть до отделения и образования самостоятельного национального государства, вместе с тем ограничивая его такими оговорками, что по-существу право наций на самоопределение сводилось на нет, что и имело место в бывшем СССР. Подтверждением неверности его концепции стали развал Советского Союза и обострившиеся межнациональные конфликты.